ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Թունյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Վարդան Գերավետյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վարդան Գերավետյանը (ներկայացուցիչ՝ Տիգրան Եգորյան) 02.05.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.
«Որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 1-ին մասը, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, 157-րդ հոդվածի 1-ին մասը, 160-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ և 4-րդ մասերը՝ ՀՀ Սահմանադրության 1, 3, 28, 29, 61, 63, 78, 79, 80, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ սույն դիմումով վիճարկվող 148-րդ հոդվածի 1-ին մասը, 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, 157-րդ

հոդվածի 1-ին մասը, 160-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ և 4-րդ մասերը՝ դատական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, ոչ միայն ոչ իրավաչափորեն սահմանափակում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը, այլ հանգեցնում են օբյեկտիվ հանգամանքներով չպայմանավորված տարբերակված մոտեցման կիրառմանը համանման փաստական հանգամանքների նկատմամբ:

Ըստ դիմողի՝ առանց որևէ ողջամիտ և օբյեկտիվ արդարացման, խտրական վերաբերմունք է սահմանվում այն անձանց նկատմամբ, ում դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորությունը դատարանի կողմից ապահովվել է ավելի ուշ, քան դրա եզրափակիչ մասի հրապարակման օրը՝ ի համեմատ այն անձանց, ում դատական ակտն ամբողջությամբ մատչելի է դարձել այն հրապարակելու նույն օրը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթները, դատական պրակտիկայում դրանց տրված վերոգրյալ մեկնաբանությամբ, ուղղակիորեն հակասում են ինչպես ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի 16.10.2012թ. ՍԴՈ-1052 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին առ այն, որ բողոքարկման ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտերին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից:

Ըստ դիմողի՝ դատավարության մասնակցի վրա առանց որևէ իրավաչափ նպատակի դրվում է լրացուցիչ պարտականություն՝ վճռաբեկ բողոքը մեկ անգամ դատավարության մասնակիցներին և գործը քննած դատարանին ուղարկված լինելու պարագայում, բողոքը դատարանի կողմից վերադարձվելուց հետո ամբողջությամբ նույն բողոքը կրկին անգամ նույն անձանց ուղարկելու պարտականություն:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով եւ ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրման արդյունքներից՝ Վարդան Գերավետյանի դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերաբերյալ

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2016 թվականի փետրվարի 9-ի ՍԴՈ-1254 որոշմամբ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը...» դրույթն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 և ՍԴՈ-1062 որոշումներում նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին, և վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի, նույն որոշմամբ ՀՀ Սահմանադրության /2015 թվականի փոփոխություններով/ 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերի պահանջներին հակասող և անվավեր է ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 5-րդ մասը՝ այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը և համապատասխան միջնորդության ու ապացույցների առկայության պարագայում իրավունքի ուժով /ex jure/ չի ճանաչվում հարգելի, նույն որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1249 որոշման մեջ նույն հարցի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար սահմանված ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության ու ապացույցների պարագայում իրավունքի ուժով /ex jure/ հարգելի ճանաչելը:

3.2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ որևէ փաստարկ չի ներկայացրել: Մինչդեռ «Սահմանադրական

դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

3.3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի, 160-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի վերաբերյալ

ՀՀ վճռաբեկ դատարանը դիմողի ուշադրությունն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ «... վճռաբեկ բողոք կրկին ներկայացնելու դեպքում անհրաժեշտ է ամբողջությամբ պահպանել վճռաբեկ բողոք ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոնները...»՝ մատնանշելով, որ «...անհրաժեշտ է ներկայացնել կրկին ներկայացվող վճռաբեկ բողոքի պատճենը գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցներ...»: Վերոնշյալի համատեքստում, կարծում ենք, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետևանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին

կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Վարդան Գերավետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

23 մայիսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-17